



ԱՐՑԱԽԸ ԿԱՆԶՈՒՄ Է

ԱՐՑԱԽԸ ԿԱՆԶՈՒՄ Է





ԱՐՑԱԽԵ ԿԱՆԶՈՒՄ Է

Արցախ. Մեծ Հայքի տասներորդ
նահանգ, մ.թ.ա. 189 - մ.թ. 387 թթ.

Artsakh: Tenth province of the Kingdom of
Greater Armenia during 189 BC - 387 AD





Խաչքար, 12-13-րդ դարեր
Հանդաբերդ,
Քարվաճառի շրջանի Քնարավան
գյուղ

Khachkar, 12-13th centuries,
Handaberd,
Karvajar region, Knaravan village

Խաչը պարտեզի կենտրոնն է,
որտեղ հոսում են Ծննդոցում
նշված չորս գետերը, որտեղ աճում
է Կենաց ծառը և բարու և չարի
գիտելիքի ծառը:

The cross is the center of the garden,
where the four rivers flow cited by
the Genesis, where the Tree of Life
grows and the Tree of the Knowledge
of Good and Evil.



ԱՐՑԱԽԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Արցախը պատմական Հայաստանի անբաժան մասն է և տարածաշրջանի կարևորագույն օղակներից մեկը, որն իր պատմության ողջ ընթացքում անքակտելիորեն կապված է եղել Հայոց աշխարհի հետ: Լեոն (Առաքել Բաբախանյան) Արցախն արդարացիորեն համեմատել է «հսկայական միջնաբերդի» հետ, առանց որի «անհնար է երևակայել Հայաստանի սրտի՝ Արարատյան երկրի պաշտպանությունը»: Աշխարհագրական խիստ կարևոր դիրքի շնորհիվ Արցախը միշտ եղել է թշնամիների թիրախում, ինչը ստիպել է ազատատենչ և խիզախ արցախցուն պայքարել սեփական հողի ու հայրենիքի համար:

Իր բազամադարյա պատմության ընթացքում արցախցին կերտել է հարուստ մշակույթ, կառուցել վանքեր ու եկեղեցիներ, ստեղծել է ուրույն բարբառ ու ինքնատիպ սովորույթներով առանձնացող ազգագրություն և բանահյուսություն, երգ ու երաժշտություն: Դեռևս XIX դ. 40-50-ականներից սկսած Արցախի բանավոր ժառանգության գրառմամբ և ուսումնասիրմամբ զբաղվել են նվիրյալ հոգևորականներ (եպիսկոպոս Մակար Բարխուդարյան, վարդապետ Խաչիկ Դադյան), անվանի բանահավաքներ (Բահատրյան եղբայրներ, Կարապետ Մելիք-Շահնազարյան՝ Տմբլաչի Խաչան) և ազգագրագետներ (Երվանդ Լալայան, Ստեփան Լիսիցյան, Ալվարդ Ղազիյան), ինչի արդյունքում կորստից փրկվել է բանավոր գրականության հսկայական շերտ:

Արցախի ավանդական երաժշտության ձայնագրման և հավաքագրման աշխատանքներին նպաստել են Կոմիտաս վարդապետը, Գրիգոր Սյունին, Ստեփան Դեմուրյանը, Ռոբերտ Աթայանը, Մաթևոս Մուրադյանը, Գուրգեն Գաբրիելյանը և ուրիշներ: Տարածաշրջանի երաժշտական բանահյուսության նպատակային հավաքագրումը մասնագետներն իրականացրել են միայն XX դ. 50-ականներից և այդ գործընթացում անուրանալի է ՀԽՍՀ ԳԱ Արվեստների պատմության և տեսության սեկտորի՝ Ներկայիս ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի (Ռ.Աթայանի «Ղարաբաղ-57», Մ.Մուրադյանի «Ղարաբաղ-58» գիտարշավները), ինչպես նաև Երևանի Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի դերն ու նշանակությունը:

Ներկա ալբոմում տեղ են գտել երաժշտագետ-բանահավաքների կողմից ավելի քան մեկդարյա

ժամանակահատվածում գրի առնված Արցախի ժողովրդական երգաստեղծության տարբեր ժանրերի՝ երկրագործական (հորովելներ), կանանց աշխատանքային (առտնին), ծիսական (հարսանեկան), պարերգեր և քնարական երգեր: Բացի ավանդական ֆոլկլորից, ստորև ընդգրկված են նաև ժողովրդական երգամտածողությամբ առանձնացող հեղինակային երգեր, որոնք մեծ ճանաչում և սեր են վայելել արցախահայության լայն շրջանակներում:

Երգացանկը կազմելիս առաջնորդվել ենք կոմիտասյան ժանրային դասակարգման սկզբունքով: Պատահական չէ, որ Կոմիտաս վարդապետն իր ժողովածուի թեմատիկ-ժանրային դասակարգումը սկսել է հենց «շինականի» երգերից՝ ի սկզբանե բաժանելով դրանք երկու խմբի (այդ խմբերի մեջ ներառված էին մինչև 1904 թ. գրառված շուրջ 300 երգերը)։

ա) դաշտի կամ բնության՝ գութանի (վարի), սայլի, կալի, քաղհանի և չանաքի երգեր.

բ) առտնին՝ սանդի (ձավարծեծի), սանդերքի (բուրդ գգելու), ճախարակի, իլիկի (մանելու) և այլն:

Արցախի երաժշտական ֆոլկլորի անդրանիկ ձայնագրությունները պատկանում են Կոմիտաս վարդապետին, որն իր բանահավաքչական գործունեության ընթացքում հատուկ ուշադրությամբ գրի է առել արցախյան հորովելներ (10-ը ձայնագրյալ օրինակ): Նա առաջինն էր, որ ուշադրություն է դարձրել երկրագործական երգերի բովանդակային, կառուցվածքային, տաղաչափական, մետրառիթմական և երաժշտական լեզվի առանձնահատկություններին: Անվանի կոմիտասագետ Ռ. Աթայանի կարծիքով Կոմիտասը երբեք չի եղել Արցախում, և պետք է ենթադրել, որ այդ հորովելները նա ձայնագրել է շմիածնում (Թիֆլիսում կամ հարակից տարածքներում) իրեն հանդիպած արցախցիներից:

Արցախյան հորովելների զգալի մասը ներկայացնում է Վարանդայի (հնում՝ Նաբանդ գավառ) Արցախի Մարտունու շրջանը, որը դեռևս քրիստոնեության արշալույսին եղել է հայոց աշխարհի հոգևոր կենտրոններից մեկը: Վարանդայում է Գրիգոր Լուսավորիչը հիմնադրել Ամարասի վանքը (IV դ. սկիզբ), որը վաղ միջնադարում դարձել է նշանավոր եպիսկոպոսանիստ: Գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցը հենց Ամարասում է բացել Արցախի առաջին դպրոցը և հիմք դրել հայերի դպրությանը: Ձայնագրված հորովելները, որոնք ներկայացնում են Վարանդայի շրջանը, զգալի թիվ են կազմում, ինչն էլ վերստին հավաստում է, որ այդ, տարածաշրջանում զարգացած էին անասնապահությունն ու հողագործությունը: Վարանդայի «Ձիգ տու, քաշի» հորովելի անդրանիկ գրառումը Կոմիտասը կատարել է 1885 թ. ծագումով շուշեցի վարդապետ

Խաչիկ Դադյանի ձայնից (վերջինս պեղել է Ազոխի քարանձավը, Ջվարթնոց տաճարը), որն այդ տարիներին դասավանդում էր Գևորգյան ճեմարանում:

Հավելենք, որ ալբոմում ընդգրկված բոլոր երգերի գործիքային մշակումներն իրականացրել է թառահար, կոմպոզիտոր, ՀՀ վաստակավոր արտիստ Արտեմ Խաչատուրը, երգերի բարբառային տեքստերը խմբագրել է լեզվաբան, բառարանագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ, դոցենտ Արմեն Սարգսյանը, իսկ երգերի ընտրության գործում մեզ օժանդակել է ԵՊԿ 2-րդ կուրսի մագիստրոս երաժշտագետ Լինդա Սարգսյանը, ինչի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը: Հենքային բոլոր տեսակի գաղափարների համար մեր խորին երախտագիտությունը երաժշտագետ-ֆուլկլորագետ, արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ալինա Փահլևանյանին: Շնորհակալություն ենք հայտնում նաև ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Աննա Ասատրյանին՝ Ա. Քոչարյանի անվ. ձայնադարանում պահվող արցախյան անտիպ ձայնագրությունները մեզ տրամադրելու համար:

Առանձնահատուկ շնորհակալություն «Նարեկացի» նվագախմբին նրբաճաշակ, անզուգական կատարումների ու ազգայինը հավիտյան զտարյուն պահելու համար:

Հարկ է նշել, որ մի քանի երգերի (համարներ՝ 6, 7, 9) բանաստեղծական տեքստի թերի լինելու պատճառով լեզվաոճական բոլոր առանձնահատկությունները պահպանելով՝ Լուսին Վանեսի նախաձեռնությամբ որոշ լրացումներ են կատարվել:

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Արցախը հատկապես հարուստ է հայ շինականի ավանդական աշխատանքային երգերով՝ հորովելներով (գութանի, տափանի, կալի, սայլի), որոնք, հազարամյակների բովում թրծվելով, մեզ են հասել ազգային անաղարտ նկարագրով: Դաշտային աշխատանքներով գյուղացին զբաղվել է վաղ գարնանից մինչև խոր աշուն: Հորովել բառը ծագում է «հո» բացականչությունից և «առավել» բառից, որը նշանակում է «շատ, ավելի, ավելացած մաս»: Խոսքը երկու հարակից

վարելահողերի միջև ընկած ազատ տարածքի մասին է, որը սահմանի դեր է կատարել և չի մշակվել: Բացականչելով «հո՛»՝ գյուղացին դիմում էր լծկան կենդանուն՝ ուղղելով նրան դեպի «առավել»:

1. ՁԻԳ ՏՈՒ, ՔԱՇԻ (Վարանդայի հորովել)

Գրառումը՝ Կոմիտասի

(Տե՛ս. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ.11, Ե., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 2000, №280, էջ 113)

2. ՀՈԼ ԱՐԱ, ԳՈՄԵՇ ԶԱՆ (Ղազախի կալի-սայլի երգ)

Գրառումը՝ Կոմիտասի

(Տե՛ս. Հայ երկրագործի աշխատանքային երգեր // Հայ ավանդական երաժշտություն.


Մատենաշար, հ.4, Կազմ.՝ Զ. Թազակչյան, Խմբ.՝ Հ. Պիկիչյան, Ե., 2009, ՀՀ ԳԱԱ ԱԻ, «Ամրոց Գրուպ» հրատ., № 4, էջ 96)

3. ԻՐԻՔՆՅԱԿԸ ՏՅՈՒՍ Ա ԵԿԱԼ

(Գ. Գաբրիելյանի երգածից ձայնագրել և վերծանել է Արթուր Շահնազարյանը)

(Տե՛ս. Հայ ավանդական երաժշտություն (Մատենաշար). Հայ երկրագործի աշխատանքային երգեր, հ.4, Կազմ.՝ Զ. Թազակչյան, Խմբ.՝ Հ. Պիկիչյան, Ե., 2009, ՀՀ ԳԱԱ ԱԻ, «Ամրոց Գրուպ» հրատ., № 90, էջ 73-74)

Արցախյան այս հռչակավոր հորովելը մեծ տարածում է ստացել հատկապես շնորհիվ անվանի բանաստեղծ, մանկագիր Գ. Գաբրիելյանի անգուգական կատարման, և նկատի ունենալով նրա երաժշտական ստեղծագործական ջիղը՝ շատերն այն սխալմամբ անվանում են «Գաբրիելյանի հորովել»: Հարկ է նշել, որ «Իրիքնյակը տյուա ա եկալ»-ը իր երգամտածողությամբ խիստ ավանդական արցախյան հորովել է և Արցախում լայն տարածում է ունեցել դեռ մինչև Գ. Գաբրիելյանը:



ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՌՏՆԻՆ ԵՐԳԵՐ

Գեղջկուհու բազմապիսի աշխատանքներից էին կով կթելը, հացահատիկ աղալը (երկանք, արգանք, աղորիք), հաց թխելը, հնձվորին դաշտ հաց տանելը, խնոցի հարելը, բուրդ գգելը (սանդերք), թել մանելը (իլիկ կամ ճախարակ), սանդ ծեծելը, քաղհան ու չանաք (բամբակի երգերը) անելը ևն, որոնք ուղեկցվել են երգերով: Այդ երգերը հորինվել են աշխատանքային գործընթացում և կապված են եղել գյուղական կենցաղի տվյալ պահի հետ: Կանանց աշխատանքային երգերի (առտնին) զգալի մասի համար ռիթմական հիմք է ծառայել աշխատանքը կատարելիս ձեռքի կամ ոտքի միալար շարժումը:

4. ԱՂԷ ԱՐԿԱՆՔ (ԱՂԵ ԱՐԳԱՆՔ, ՄԱՂԵ ԱՐԳԱՆՔ)

«Գանձասար» համույթի կատարումից

Գեղ. ղեկ.՝ Թ. Պողոսյան, մշակումը՝ Ա. Խաչատուրի

Արկանքը (երկանք) գեղջկուհու անփոխարինելի գործիքն էր, որով հացահատիկ էին աղում: Աշխատանքային երգերում, առհասարակ, հաճախ է շոշափվում հայ գեղջուկի սոցիալական ծանր վիճակը:

(Տեն. Գաբրիելյան Գ., «Ղարաբաղի հորովել» երգարան, Ե., 2003)

5. ԽՇՆԷՅԷ, ՆՇՐԷՅԷ (ԽՆոցու երգ)

Մշակումը՝ Ա. Խաչատուրի

Ապրուստի դժվարության մասին է խոսվում նաև խնոցու երգում: Որպես կանոն, իր բոլոր գանգատները հայ կինը պատմում էր սիրելի գործիքին (երկանք, խնոցի, ճախարակ), առանց որի անհնար էր պատկերացնել հայ ընտանիքի գոյությունը:

(Տեն. Գաբրիելյան Գ., «Ղարաբաղի հորովել» երգարան, Ե., 2003)

6. ՄԱՆԱԾ ԹԻԼԸՍ (Գեղջկուհու գանգատը)

Գրառումը՝ Գր. Սյունու, մշակումը՝ Ա. Խաչատուրի

Տնային հոգսերի և ծանր սոցիալական վիճակի մասին է: Անվանի կոմպոզիտոր և խմբավար Գրիգոր Սյունին այս երգը ձայնագրել է 1895 թ., Շոշի գյուղի բնակիչ Մինա բաջու երգածից: Այն Գր. Սյունու վաղ գրառումներից է, սակայն ուշ տարիների խմբերգային մշակումներից, որը հեղինակը տպագրել է Նյու-Յորքում 1934 թ. («Նոր կյանքի երգեր», էջ 46):

(Տեն. Գրիգոր Սյունի. Խմբերգեր, կազմ.՝ Ռ. Աթայան, Ե., 2013, «Հայաստան» հրատ., №16, էջ 133, 306)

ՕՐՈՐ

Օրորոցային երգերի հիմնական բովանդակությունը մայրական սերն է դեպի իր սիրասուն զավակը, որտեղ փոքրիկին համեմատել են ծաղիկների, ծառերի, տնային կենդանիների (գառնուկ, ուլիկ, փիսիկ), բնության հրաշալիքների և երկնային լուսատուների հետ, ինչը նպաստել է օրորների պատկերավորությանը: Ցանկանալով երեխային պաշտպանել ապագա թշնամիներից՝ մայրը օրորոցային երգերին է միահյուսել աղոթքներ, ինչպես նաև անեծքներ:

7. ԱՔԻՇ, ԱՔԻՇ (Արցախյան ժողովրդական օրոր)

(Կատարվում է առաջին անգամ, անտիպ է)

Գրառումը՝ Ռ. Աթայանի, վերծանումը՝ Մ. Տիգրանյանի, մշակումը՝ Ա. Խաչատուրի
Ներկայացված օրորում «աքիշ» բացականչությամբ դուրս են «քշել» չար ուժերին՝ չարքերին, վանել մանկական հիվանդություններն ու բացասական երևույթները:

(Տճս. ՀՀ ԳԱԱ ԱԻԶ, Ռ. Աթայանի «Ղարաբաղ-57» գիտարշավ, տուփ 544 (644), №14, կատարող՝ Մովսիսյան Սերգեյ, ք. Ստեփանակերտ, կատարել է թառի ուղեկցությամբ):

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

Հարսանիքը հնագույն ծեսերից մեկն է, որը մինչ օրս շարունակվում է կենցաղավարվել:
Հարսանեկան բազմապիսի արարողակարգերից էին թագավորի և նորահարսի գովքերը, ծիսական պարերգերն ու կատակերգերը:

8. ԱՅՈՒՆ ՕՐՆԱՆՔԸ (ԱՅԱՅԻ ՕՐՆԱՆՔԸ)

(Արցախի ժողովրդական հարսանեկան երգ՝ մաղթանք)

Մշակումը՝ Ա. Խաչատուրի

Արցախում մեծ մորն ու տատին անվանում էին «այա»: Յուրաքանչյուր հարսանիքի կարևոր արարողակարգ էին մեծահասակների օրհնանքներն ու բարեմաղթանքները: Երբ նորապսակները հարսանքավորների ուղեկցությամբ եկեղեցուց գալիս էին տուն, որտեղ պետք է տեղի ունենար հարսանյաց խնջույքը, նրանց այս երգով դիմավորում էր այան:

9. ԴԸՌ ԴՕՓ-ԴՕՓ (Արցախյան ժողովրդական հարսանեկան կատակերգ)

Մշակումը՝ Ա.Խաչատուրի

Հարսանեկան ծեսի անբաժան ուղեկիցն են եղել հրացանային կրակոցները, աղմուկն ու աղաղակը, ինչն ունեցել է չարը խափանելու նպատակ: Նմանատիպ կատակային բնույթ ունի խոսուն վերնագրով «Դըռ դօփ-դօփ» պարերգը, որտեղ կատակի ձևով ծաղրի են ենթարկվում հարսանքավորները, որն աղերսներ ունի «Տեսեք էն ղրն է» հարսանեկան կատակերգերի կոմիտասյան գրառումների հետ:

ՊԱՐԵՐԳԵՐ

Պարերգը ժողովրդական երգաստեղծության ամենասիրված և կայուն ժանրերից է, որի նկատմամբ հետաքրքրությունը ցայսօր չի նվազում: Պարերգում միավորվում են հայ բանահյուսության երեք կարևոր ճյուղեր՝ երաժշտություն, բանաստեղծական տեքստ և պար, որի արմատները խորանում են մինչև հեթանոսական շրջան և սերտորեն կապված են ավանդական տարբեր ծեսերի ու հավատալիքների հետ:

10. ՆԱԽՇՈՒՆ ԲԱՋԻ (Արցախյան ժողովրդական պարերգ)

Մշակումը՝ Ա. Խաչատուրի

«Նախշուն բաջի», ինչպես և «Տասնըջօրս» պարերգերը մեծ տարածում են ստացել հռչակավոր հայ պարուհի և երգչուհի, ծագումով շուշեցի՝ Արև Բաղդասարյանի կատարումների շնորհիվ: Այդ ժողովրդական պարերգերի նշանավոր բեմականացումները ավելի քան 50 տարի մեծ դերասանուհու երգացանկի բեմական այցեքարտն են եղել:

11. ՏԱՍՆԸՉՕՐՍ (Արցախյան ժողովրդական պարերգ)

Մշակումը՝ Ա. Խաչատուրի

«Տասնըջօրսը» Արցախում տարածված և սիրված պարերգ է, որի անվանումը բխում է պարաքայլերի և ոտքերի քանակից:

12. ՃՕԽՏ ԾԱՂԿԷՆ ԿԷՆԱՑԸ (Հարսանեկան երգ)

Խոսք՝ Ա. Մանասյանի, երաժշտ.՝ Ա. Խաչատուրի

Ներկա հավաքածուի մեջ վերջին երկու երգը ժողովրդական չեն, այլ հեղինակային: Նշենք, որ հայ ժողովրդական երգաստեղծության մեջ հարսանեկան խնջույքի նմանատիպ երգերը

տարածված են եղել (հատկապես խորհրդային շրջանում): Այդուհանդերձ, հեղինակներին հաջողվել է պահպանել արցախյան ավանդական երաժշտական ոգին և բարբառի ինքնատիպությունը, ինչն էլ նպաստել է այդ երգերի տարածմանն ու ժողովրդականությանը:

13. ՀԷՂԻՆԱ (Քնարական)

Խոսք՝ Ա. Մանասյանի, երաժշտ.՝ Ա. Խաչատուրի
Այս և նախորդ երգի խոսքերի հեղինակն է նշանավոր արցախցի՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալեքսանդր Մանասյանը:

Ներածական խոսքն ու ծանոթագրությունները՝
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, դոցենտ
ա.գ. թ. Մարիաննա Տիգրանյանի

Նախագիծը չափազանց կարևոր նշանակություն ունի. այն անհրաժեշտություն է այս պահին: Արցախյան երգերը գոհարներ են, որոնք զարդարում են հայկական մշակույթը: Այն պետք է պահպանել ու փոխանցել հաջորդ սերունդներին: Արցախյան երգերը միայն արցախցիների համար չեն, այլ աշխարհասփյուռ ողջ հայության. դրանք կոչ են համախմբումի, միասնականության, կոչ՝ փրկելու մնացածը, վերադարձնելու կորցրածը:

Երգը, արվեստը պայքարի միջոց են: Սա էլ պայքարելու մեր ձևն է:

Ալինա Փաիլանյան
ԵՊԿ պրոֆեսոր, արվեստի վաստակավոր գործիչ

Traditional Songs of Artsakh

Artsakh is an integral part of historical Armenia and one of the most important links of the region, which throughout its history has been inseparably connected with the Armenian world. Leo rightly compared Artsakh to a "huge citadel", without which "it is impossible to imagine the protection of the heart of Armenia, the Ararat land". Due to its very important geographical position, Artsakh has always been the target of enemies, which forced the freedom loving and brave Artsakhians to fight for their own land and homeland. During its centuries-old history, the Artsakhians have created a rich culture, built monasteries and churches, created ethnography and folklore, song and music with a unique dialect and original customs. Still the 40-50s of the 19th century, devoted clergymen (Bishop Makar Barkhudaryan, Reverend Khachik Dadyan), famous collectors (Bahatryan brothers, Karapet Melik-Shahnazaryan, Tmblachi Khachan) and ethnographers (Yervand Lalayan, Stepan Lisitsyan, Alvard Ghaziyan) have been engaged in writing and studying Artsakh's oral heritage. Due to their efforts a vast layer of oral literature was saved from loss.

Komitas Vardapet, Grigor Syuni, Stepan Demuryan, Robert Atayan, Matevos Muradyan, Gurgun Gabrielyan and others contributed to the recording and collection of Artsakh traditional music. Targeted collection of musical folklore of the region was carried out by specialists only since the 50s of the 20th century and in that process is undeniable the role and significance of the Art History and Theory Sector of the National Academy of Sciences of the Armenian SSR, currently the Art Institute of the National Academy of Sciences of the RA (R. Atayan's "Karabakh-57", M. Muradyan's "Karabakh-58" scientific expeditions), as well as the Chair of Armenian Folk Music Studies of the Komitas State Conservatory in Yerevan.

The current album contains various genres of Artsakh folk songwriting written by musicologists-compilers over a period of more than a century: fieldwork (horovels), women's work (domestic), ritual (wedding) songs, dance and lyrical songs. In addition to traditional folklore, below are also presented original songs, distinguished by folk singing, which have gained great recognition and love in the broad circles of Artsakh Armenians.

While compiling the playlist, we were guided by the principle of Komitas genre classification. It is no coincidence that Komitas Vardapet started the topic-genre classification of his collection from the "farmer's" songs, initially dividing them into two groups (about 300 songs written before 1904):

- a. songs of field or nature: plough, cart, barn, weeding songs.
- b. domestic: songs presenting tools for wheat beating, wool spinning, winch and bobbin (spinning), etc.

The first recordings of Artsakh musical folklore belong to Komitas, who during his collecting activities wrote down Artsakh horovels with special attention (10 recorded copies). He was the first to pay attention to the content, structure, rhythmic, metrical and musical language features of field work songs. According to Komitas expert R. Atayan, Komitas has never been to Artsakh, and it must be assumed that he recorded those horovels from the Artsakhians he met in Etchmiadzin (Tiflis or other surrounding areas).

A significant part of the Artsakh horovels is represented by the nowadays Martuni region of Varanda (formerly Haband province), which was one of the spiritual centers of the Armenian world even at the dawn of Christianity. In Varanda, Grigor Lusavorich founded the Amaras Monastery (early 4th century), which became a prominent seat of the bishop in the early Middle Ages. After the invention of the alphabet, Mesrop Mashtots opened the first school in Artsakh in Amaras and laid the foundation for Armenian education. The considerable number of recorded horovels representing the Varanda region confirms that animal husbandry and agriculture were developed in that region.

Komitas made the first recording of the horovel “Dzig tu, Kashi” of Varanda in 1885, from the voice of Reverend Khachik Dadyan from Shoushi (he unearthed the Azokh Cave, Zvartnots Cathedral), who taught at the Gevorgyan Seminary in those years.

The instrumental arrangements of all the songs included in the album were performed by the tar player, composer, RA Honored Artist Artem Khachatur, the dialect texts of the songs were edited by linguist, lexicographer, candidate of philological sciences, the NKR Honored Worker of Science, associate professor Armen Sargsyan, and musicologist Linda Sargsyan, a 2nd year master's student at YSC, assisted us in the selection of songs, for which we express our gratitude. Our deep appreciation and respect to ethnomusicologist, PhD in Arts, YSC Professor, RA Honored Worker of Arts Alina Pahlevanyan for all kinds of basic ideas. We also express our thanks to the Director of the Institute of Arts of the National Academy of Sciences of the RA, musicologist, Doctor of Arts, RA Honored Worker of Arts, Professor Anna Asatryan, for providing us with the unique Artsakh recordings stored in A. Kocharyan's audio library.

Special thanks to the Naregatsi Orchestra for their exquisite, incomparable performances and maintaining the purity of the national music.

It should be noted that due to the incompleteness of the poetic text of several songs (numbers: 6, 7, 9), some additions were made on the initiative of Lusin Vanes, keeping all linguistic and stylistic features.

FIELD WORK SONGS

Artsakh is especially rich in the traditional field work songs; horovels (songs of plough, harrow, barn, cart) of the Armenian farmer, which, being matured through thousands of years, have reached us in intact national form. The peasant worked in the fields from early spring to deep autumn. The word

horovel comes from the exclamation "ho" and the word "more" which means "much, more, increased part". It refers to the free space between two adjacent fields, which acted as a border and was not cultivated. With an exclamation of "ho!" the peasant turned to the lever animal, directing it to the "very further point".

1. **DZIG TU, KASHI** (horovel from Varanda)

Recorded by Komitas

(See: Komitas, Collection of Works, Vol. 11, E., National Academy of Sciences of the Republic of Armenia, "Science" ed., 2000, No. 280, p. 113)

2. **HOL ARA, GOMESH JAN** (barn- cart song from Kazakh)

Recorded by Komitas

(See: Fieldwork songs of an Armenian farmer // Armenian traditional music: Book Series, vol. 4, Compiled by Z. Tagakchyan, Edited by H. Pikichyan, Yerevan, 2009, RA NAS AI, "Amrots Group" ed., № 4, page 96)

3. **IRIKNYAKY TYUS A YEKAL**

(Artur Shahnazaryan recorded and decoded it from the singing by G. Gabrielyan)

(See: Armenian traditional music: (Book Series), Fieldwork songs of an Armenian farmer, vol. 4, Compiled by Z. Tagakchyan, Edited by H. Pikichyan, Yerevan, 2009, RA NAS AI, "Amrots Group" ed., № 90, page 73-74)

This famous Artsakh horovel has gained great popularity especially due to the incomparable performance by the famous poet, children's writer G. Gabrielyan, and considering his musical creativity, many mistakenly call it "Gabrielyan's horovel". It is worth noting that "Iriknyaky Tyus A Yekal" is a very traditional Artsakh horovel with its lyricism and was widely popular in Artsakh even before G. Gabrielyan.

DOMESTIC AND LABOR SONGS OF WOMEN

Among the many chores performed by a peasant woman was milking cows, grinding grain, baking bread, taking bread to the reaper in the field, beating the churn, wool combing, thread spinning (bobbin and winch), beating of mortar, weeding (cotton songs) etc., which were accompanied by songs. Those songs were invented during the work process and were related to the given moment of rural life. The rhythmic basis for a significant part of women's work songs (domestic) was the unison movement of the hand or foot while performing the work.

4. **AGHE ARKANK**

From the performance of the Gandzasar Ensemble

Artistic Director: T. Poghosyan, arranged by A. Khachatur

Mill stone was the indispensable tool of the peasant woman, with which they ground grain. In work songs, in general, the social position of the Armenian peasant is often touched upon.
(See: G. Gabrielyan, "Karabakh Horovel" Songbook, Yerevan, 2003)

5. **KH'NETSE, H'RETSE (Churn song)**

Arranged by A. Khachatur

The difficulties of life are also presented in the churn song. As a rule, the Armenian woman told all her complaints to her favorite instrument (mill stone, churn, winch), without which it was impossible to imagine the existence of an Armenian family.
(See: G. Gabrielyan, "Karabakh Horovel" Songbook, Yerevan, 2003)

6. **MANATS TEEL'S (The complaint of the peasant woman)**

Recorded by Gr. Syuny, arranged by A. Khachatur

It is about domestic worries and a difficult social situation. Composer and conductor Grigor Syuny recorded this song in 1895, from the singing of Mina Baji, a resident of the village of Shosh. It is

one of Grigor Syuny's early notes, but from the later choral arrangements. It was published by the author in New York in 1934 ("Songs of the New Life," p. 46).

(See Grigor Syuny, Choral Songs, compiled by R. Atayan, Yerevan, 2013, Hayastan ed., №16, pages 133, 306)

LULLABY

The main content of lullabies is the love of a mother for her beloved child, where the baby is compared to flowers, trees, domestic animals (lamb, owl, cat), as well as the wonders of nature and heavenly bodies, which contributed to the visualization of lullabies. In order to protect the child against future enemies, the mother said prayers as well as curses in the lullabies.

7. **A'KISH, A'KISH (Artsakh folk song)**

(It is being performed for the first time; it is unpublished)

Recorded by R. Atayan, deciphered by M. Tigranyan, arranged by A. Khachatur

In the presented lullaby, with the exclamation "a'kish" they "drove out" the evil forces, the evils, defended against childhood diseases and negative phenomena.

(See Art Institute audio library of the RA National Academy of Sciences, R. Atayan's "Karabakh-57" scientific campaign, box 544 (644), №14, performer: Sergey Movsisyan, c. Stepanakert, performed under the accompaniment of tar).



WEDDING SONGS

Wedding is one of the ancient rituals that continues to be practiced today. Among the various wedding ceremonies were the praises of the king and the bride, ritual dances and joke songs.

8. **AYA'S BLESSING**

(A folk wedding song of Artsakh: wish)

Arranged by A. Khachatur

In Artsakh, great-grandmothers and grandmothers were called “aya”. An important ritual of every wedding was the blessings and good wishes of the adults. When the newlyweds accompanied by wedding guests were coming from the church to the house where the wedding feast was to take place, Aya greeted them with this song.

9. **D'R DOP -DOP** (Artsakh folk wedding joke song)

Arranged by A. Khachatur

Gunshots, noise and shouting were inevitable during the wedding ceremony, which had the purpose of thwarting the evil. The dance song with the eloquent title “D'r dop-dop” has a similar humorous character, where wedding guests are jokingly made fun of and which has a correlation with Komitas recordings of the “Look what's that” wedding joke songs.

DANCE SONGS

The dance song is one of the most popular and stable genres of folk songwriting, the interest in which continues to this day. The dance unites three important branches of Armenian folklore: music, poetic text and dance, the roots of which go back to the pagan period and are closely related to various traditional rituals and beliefs.

10. **NAKSHUN BAJI** (Artsakh folk dance song)

Arranged by A. Khachatur

The dance songs “Nakhshun Baji” and “Tasn’chors” became very popular thanks to the performances by Arev Baghdasaryan, a famous Armenian dancer and singer from Shoushi.

The famous performances of these folk dances were the stage symbol of the great artist for over 50 years.

11. **TASN'CHORS** (Artsakh folk dance song)

Arranged by A. Khachatur

“Tasn’chors”(fourteen) is a popular and beloved dance song in Artsakh, the name of which comes from the number of dance steps and feet.

12. **JHOKHT TSAKHKEN KENATSY** (Toast to Newlyweds) (Wedding song)

Lyrics by A. Manasyan, Music by A. Khachatur

The last two songs in the present album are not folk, but author songs. It should be noted that similar wedding feast songs were popular in Armenian folk songwriting (especially in the Soviet period). Nevertheless, the authors managed to preserve the traditional musical spirit of Artsakh and the originality of the dialect, which contributed to the spread and popularity of these songs.

13. **HEGHINA** (Lyrical)

Lyrics by A. Manasyan, Music by A. Khachatur

The author of the words of this and the previous song is a prominent Artsakhian, Doctor of Philosophy, professor, correspondent member of RA NAS Alexander Manasyan.

Introduction and annotation by
Marianna Tigranyan,

PhD in Arts, senior researcher, associate professor
Institute of Arts of the RA National Academy of Sciences

The project is extremely important: it is a necessity at this time. Artsakh songs are jewels that adorn Armenian culture. It should be preserved and passed on to the next generations. Artsakh songs are not only for the people of Artsakh, but for all Armenians around the world. They are a call for consolidation, unity, a call to save what is left, to return what was lost.

The song and art are a means of struggle. This is our way of fighting.

Alina Pahlevanyan

YSC Professor, Honored Worker in Art of RA





ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Քո կապը մշակույթի հետ

«Նարեկացի» արվեստի միությունը (ՆԱՄ) բարեգործական հիմունքներով գործող և շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է: Կրելով սուրբ Գրիգոր Նարեկացու անունը և առաջնորդվելով հոգևորի խորհրդով՝ միությունը կոչված է ծառայելու հայ արվեստին, մշակույթին և հոգևոր արժեքներին: «Նարեկացի» արվեստի միությունը հիմնադրվել է 2000 թ. ԱՄՆ-ում Նարեկ Յարութիւնեանի կողմից, իր ավագ եղբոր՝ Սարո Յարութիւնեանի, Հարկո Ինսենթիվզ ընկերության և իրենց լուսահոգի հոր՝ Կարապետ Յարութիւնեանի հիմնական աջակցությամբ:

2004 թ. միությունն իր դռներն է բացել Երևանում:

Իր գործունեության ընթացքում ՆԱՄ-ը կազմակերպել և կյանքի է կոչել մի քանի տասնյակ հատուկ նախագծեր, ամեն տարի իրականացնելով է 300-ից ավելի համերգներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ, վարպետության դասեր, ֆիլմերի ցուցադրություններ և այլն: Այս ձիգ տարիների ընթացքում միության ջանքերով լույս են ընծայվել բազմաթիվ արժեքավոր հրատարակություններ, համագործակցություններ են եղել հայ և օտարերկրացի ստեղծագործողների, ինչպես նաև դեսպանատների հետ:

«Նարեկացի» արվեստի միության Երևանի կենտրոնում գործում են «Նարեկացի» ժողովրդական նվագարանների նվագախումբը, «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը, «Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խումբը և միության նկարչության դասարանը:

ՆԱՄ-ում բոլոր միջոցառումները կազմակերպվում են անվճար հիմունքներով և բոլոր միջոցառումների մուտքը միշտ ազատ է:

NAREGATSI ART INSTITUTE

Your Culture Connection

The Naregatsi Art Institute (NAI) is a non-profit organization that was established and currently operates on purely charitable bases. Named after Saint Gregory of Narek, the NAI's principle mission is to preserve and promote Armenian art, culture and spiritual values. Naregatsi Art Institute was founded in the USA in the year 2000 by philanthropist Nareg Hartounian and by the generous contributions of Saro Hartounian, their late father Garabed Haroutunian and Harco Incentives Inc.

The Institute opened its doors in Yerevan in 2004.

Since its inception, the NAI each year has presented more than 300 concerts, exhibitions, lectures, master classes and film screenings collaborating with a great number of artists from Armenia and abroad and with some embassies as well. As part of its contribution to Armenian culture, NAI has created numerous unique books, CD's and publications exploring various facets of the rich Armenian cultural heritage.

The NAI provides a special place for children, emerging artists, artists with disabilities and artists living in the regions of Armenia outside of Yerevan.

The NAI is home to The Naregatsi Orchestra, The Nova Folk Instruments Ensemble, The Knar Spiritual and Folk Song Group and The Painting Class.

Admission to all events is free.

«Նարեկացի» արվեստի միության Շուշիի մասնաճյուղ

Naregatsi Art Institute **Shoushi Branch**

2006 թ. «Նարեկացի» արվեստի միությունը հիմնում է իր մասնաճյուղը Շուշիում:

Շուշիի կրթօջախ-կենտրոնում անվճար իրականացվում էին տարբեր ուսուցողական ծրագրեր՝ կիթառի (հեղինակային երգ), գեղանկարչության, փայտափորագրության, մանրանկարչության, ասեղնագործության, լուսանկարչության, կարպետագործության, կավագործության, թատերական, պարի, ասմունքի, երգի, անգլերենի, արտթերապիայի մշտական դասընթացներ, ինչպես նաև բազմաբնույթ միջոցառումներ:

Ցավոք, 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո կորցրեցինք Շուշին, այնուհետև նաև Արցախը:

In 2006, the Naregatsi Art Institute founded its branch in Shoushi.

The Art Center in Shoushi provided a variety of free classes in music (including piano, bard songs class, choir), as well as instructions in painting, wood engraving, miniature painting, embroidery, photography, carpet making, pottery, theater, puppet theater, dance, recitation, English language, art therapy, computer graphics and design. Naregatsi Shoushi also provided its own unique series of presentations and cultural events.

Unfortunately, after the 44-day war of 2020 we lost Shoushi, and then Artsakh too.



Shoushi Center



Website Archieve

«Նարեկացի» արվեստի միության Շուշիի մասնաճյուղ
Naregatsi Art Institute **Shoushi Branch**







«Նարեկացի» արվեստի միության Շուշիի մասնաճյուղի բացումը,
Օգոստոսի 31, 2006 թ. **Կարապետ Յարութիւնեան**

The opening ceremony of the Naregatsi Art Institute Shoushi branch,
August 31, 2006 **Garabed Haroutunian**















ԼՈՒՍԻՆ ՎԱՆԵՍ

Ծնվել է 1994 թ.

ք. Ստեփանակերտում (Արցախ):

LUSIN VANES

Born in 1994, in Stepanakert (Artsakh).



Սովորել է Կոմիտասի անվան
երաժշտական դպրոցում և
Երևանի Կոմիտասի պետական
կոնսերվատորիայում՝ ժողովրդական
երգեցողություն մասնագիտությամբ:
Երգել է Սուրբ Հակոբ եկեղեցու, Շուշիի
մշակույթի տան երգչախմբերում և
եղել Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու
երգչախմբի ղեկավարը:

Լուսինեն ղեկավարել է «Նարեկացի»
արվեստի միության Շուշիի
մասնաճյուղի հոգևոր և ժողովրդական
երգերի խումբը և եղել Սուրբ
Աստվածածին եկեղեցու երգչախմբի
ղեկավարը (2014-2017): 2017 թ.
անդամակցել է «Անկախության սերունդ»
համահայկական երգչախմբին և նույն
տարում ղեկավարել «Նարեկացի»
արվեստի միության «Քնար» խումբը:

Մասնակցել է բարեգործական
համերգների Հայաստանում և
արտերկրում, այդ թվում՝ Կիևի
Victoria 6-րդ միջազգային մրցույթին՝
նվաճելով 1-ին տեղը ժողովրդական
երգեցողության, 3-րդ տեղը՝ դասական
երգեցողության անվանակարգերում:

Studied at the Komitas Music School
and later at the Komitas State
Conservatory in Yerevan, specializing
in Folk Singing. She started her
musical journey with the Choir of St.
Hakob Church in Stepanakert, Shoushi
House of Culture, and became the
Head of the Choir at Ghazanchetsots
Church in Shoushi.

Lusin also led the Spiritual and
Folk Songs Group at the Naregatsi
Art Institute's Shoushi branch and
served as Head of the Choir at St.
Astvatsatsin Church (2014-2017).
She joined the Generation of
Independence Pan-Armenian Choir in
2017 and became the Artistic Director
of the Spiritual and Folk Songs Group
of the Naregatsi Art Institute's "Knar"
group.

As a soloist, Lusin participated in
charity concerts across Armenia and
abroad, including Kyiv's 6th Victoria
International Competition, where she
won 1st place in folk singing and 3rd
in classical singing.

«Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խումբ

Knar Spiritual and Folk Songs Group

«Նարեկացի» արվեստի միության «Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խումբը ստեղծվել է 2017 թ.: Խմբի գեղարվեստական ղեկավարն է Լուսինե Աղաջանյանը:

«Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խմբի գլխավոր նպատակն է պահպանել և տարածել հայկական հոգևոր և ժողովրդական երգերը:

The Knar Spiritual and Folk Songs Group of the Naregatsi Art Institute was launched in 2017. Artistic Director, Lusine Aghajanyan.

The Knar Spiritual and Folk Songs Group is aimed to preserve and spread Armenian spiritual and folk songs.





«Նարեկացի» նվագախումբ

Գեղարվեստական ղեկավար՝ Արտեմ Խաչատուր

The Naregatsi Orchestra - Artistic Director: Artem Khachatur

«Նարեկացի» նվագախումբը ստեղծվել է 2008 թ. ՆԱՄ-ի հարկի տակ 2005 թ. գործող թառի և քամանչայի անվճար դասընթացների հենքի վրա:

Խմբի առաջին գեղարվեստական ղեկավարն էր ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, թառահար Հովիկ Սահակյանը: 2015 թ. առ այսօր նվագախմբի գեղարվեստական ղեկավարն է կոմպոզիտոր, թառահար, ՀՀ վաստակավոր արտիստ Արտեմ Խաչատուրը:

Նվագախումբը 2010 թ. թողարկեց իր առաջին ձայնասկավառակը, որը հաղթող ճանաչվեց Ազգային երաժշտական մրցանակաբաշխության «Տարվա լավագույն ժողովրդական ալբոմ» անվանակարգում: 2012 թ. թողարկվեց երկրորդ՝ «Վերածնունդ» ձայնասկավառակը:

2016 թ. ժողովրդական նվագարանների անսամբլների հանրապետական մրցույթ-փառատոնին նվագախումբն արժանացավ Գլխավոր մրցանակի:

2018 թ. թողարկել է երրորդ՝ «Նոր շունչ» ձայնասկավառակը:

The Naregatsi Orchestra was launched in August 2008 based on the tuition-free tar and qamancha classes organized back in 2005.

From its inception through June 2015, the Artistic Director of the Orchestra has been RA Honorary Worker of Culture and tar player Hovik Sahakyan who was succeeded by Artistic Director, composer, musician, RA Honorary Artist Artem Khachatur.

The Orchestra's first CD released in 2010 was nominated as **"The Best Album of the Year"** at the National Music Awards 2010.


The Orchestra released their second CD **"Rebirth"** in 2012.

The Orchestra won the **Grand Prix** at the Republican Contest-Festival of Folk Instruments Ensembles in 2016.


The third CD entitled **"New Breath"** was released in 2018.



1. Միեր Ամիրջանյան (շվի)
2. Գագիկ Ադամյան (բլու)
3. Կարապետ Հայրապետյան (դուդուկ 1)
4. Նարեկ Խանզադյան (դուդուկ 1)
5. Ժիրայր Առաքելյան (դուդուկ 2)
6. Հովիկ Ստեփանյան (դուդուկ 2)
7. Վաչե Քեռյան (դուդուկ 3)
8. Վարդան Մանուկյան (դուդուկ 3)
9. Գոհար Ֆրանգյան (քանոն 1)
10. Էդիտա Մաթևոսյան (քանոն 1)
11. Անուշ Խաչատրյան (քանոն 2)
12. Արեգնազ Ալավերդյան (քանոն 2)
13. Մարինե Բալումյան (սանթուր)
14. Արտյոմ Խաչատրյան (թառ 1)
15. Թադևոս Եղիգարյան (թառ 2)
16. Տաթև Մնացականյան (թառ 2)
17. Դավիթ Սայադյան (ուդ)
18. Արփինե Բախչինյան (ուդ)
19. Էդուարդ Տեր-Կարապետյան (դիոլ)
20. Միքայել Գուլիկեխվան (դափ, տմալապիտո, մեծ թմբուկ)
21. Արտյոմ Ֆրանցուզյան (դիոլ 2)
22. Էրիկ Հովհաննիսյան (քամանչա 1)
23. Արգինե Իսպիրյան (քամանչա 2)
24. Արման Հովհաննիսյան (քամանչա 2)
25. Մարգարիտ Գասպարյան (փոքր բամբիռ)
26. Լիլիթ Խաչունց (մեծ բամբիռ)
27. Գուրգեն Մարտիրոսյան (կոնտրաբաս)



1. Mher Amirjanyan (shvi)
2. Gagik Adamyan (blul)
3. Karapet Hayrapetyan (duduk 1)
4. Narek Khanzadyan (duduk 1)
5. Zhirayr Arakelyan (duduk 2)
6. Hovik Stepanyan (duduk 2)
7. Vache Keryan (duduk 3)
8. Vardan Manukyan (duduk 3)
9. Gohar Frangyan (qanun 1)
10. Edita Matevosyan (qanun 1)
11. Anush Khachatryan (qanun 2)
12. Aregnaz Alaverdyan (qanun 2)
13. Marine Balumyan (santoor)
14. Artyom Khachatryan (tar 1)
15. Tadevos Yedigarian (tar 2)
16. Tatev Mnatsakanyan (tar 2)
17. Davit Sayadyan (oud)
18. Arpine Bakhchinyan (oud)
19. Eduard Ter-Karapetyan (dhol)
20. Mikayel Gulikekhvaev
(dap, tmplapito, big drum)
21. Artyom Frantzuzyan (dhol 2)
22. Eric Hovhannisyan (qamancha 1)
23. Argine Ispiryan (qamancha 2)
24. Arman Hovhannisyan (qamancha 2)
25. Margarit Gasparyan (small bambir)
26. Lilit Khachunts (large bambir)
27. Gurgen Martirosyan (bass bambir)








ՁԻԳ ՏՈՒ ՔԱՇԻ

Ձիգ տու, քաշի, ւայ եզնը,
Արա հո՛, հո՛, ւարա հո՛,
Այ, լուծդ մաշի, ւայ եզնը,
Արա հո՛, հո՛, ւարա հո՛,
Աստված պահե քու տարը,
Արա հո՛, հո՛, ւարա հո՛,
Այ, մինն էլ կտաշի, ւայ եզնը
Արա հո՛, հո՛, ւարա հո՛,
Արա հո՛, ւարա հո՛:



ՀՈԼ ԱՐԱ, ԳՈՄԵՇ ԶԱՆ

Հո՛լ արա, գոմե՛շ ջան,
Հո՛լ արա, գոմե՛շ ջան,
Հո՛լ արա, գոմե՛շ ջան, հո՛:

Հոլե՛լ, հոլե՛լ, հոլե՛լ, հոլե՛լ, հո՛, ջան,
Հոլե՛լ, հոլե՛լ, հոլե՛լ, հո՛, ջան, հո՛, ջան, հո՛:

Թո՛լ արա, գոմե՛շ ջան,
Թո՛լ արա, գոմե՛շ ջան,
Թո՛լ արա, գոմե՛շ ջան, հո՛:

Հոլե՛լ, հոլե՛լ, հոլե՛լ, հոլե՛լ, հո՛, ջան,
Հոլե՛լ, հոլե՛լ, հոլե՛լ, հո՛, ջան, հո՛, ջան, հո՛:

Թո՛լ արա, գոմե՛շ ջան,
Թո՛լ արա, գոմե՛շ ջան,
Թո՛լ արա, գոմե՛շ ջան, հո՛:

Հոլե՛լ, հոլե՛լ, հոլե՛լ, հոլե՛լ, հո՛, ջան,
Հոլե՛լ, հոլե՛լ, հոլե՛լ, հո՛, ջան, հո՛, ջան, հո՛:



ԻՐԻՔՆՅԱԿԸ ՏՅՈՒՍ Ա ԵԿԱԼ

Իրիքնյակը տյուս ա եկալ,
Տանըս յըրա լյուս ա եկալ,
Սօր մին կորե վեր վար անինքյ,
Գյիդա՝ սըրտես հույս ա եկալ:


Հո՛ ըրա, հո՛, ապան մատաղ,
Ապուն դալու կուճուր հոտաղ,
Հո՛ ըրա, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛:

Հըռնե ապան մինակ ա իլալ,
Դարդը սըրտեն տենակ ա իլալ,
Էտ հո՛նց բյուրդան բոյ քըշեցեր,
Դարդը սըրտաս տեն քըշեցեր:

Հո՛ ըրա, հո՛, ապան մատաղ,
Ապուն դալու կուճուր հոտաղ,
Հո՛ ըրա, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛:

Էս նեղ օրեն լեն օր կըկյա,
Մեր արտըն էլ ըլոր կըկյա,
Արտը հիշքան էլ կարճ ինի,
Կեմը խուրթնավ հըլոր կըկյա:

Հո՛ ըրա, հո՛, ապան մատաղ,
Ապուն դալու կուճուր հոտաղ,
Հո՛ ըրա, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛:



ԱՂԷ ԱՐԿԱՆՔ

Արցախյան ժողովրդական երգ
(Տպագրված է Գուրգեն Գաբրիելյանի «Ղարաբաղի հորովել»
երգարանում, Երևան, 2003 թ.)

Պուժկես տակեն վերջին փուշին
Յըկավ տարավ Դերանց Նուշին,
Էն մին հափուռ կօրեկըն էլ
Բալաս տըվավ ծըտեն, դուշին:

Աղէ, արկանք, մանղէ, արկանք
Քըզանում կա էլին հարգանք:

Կո՛րկուտ ըրա, վէր ճան անինք,
Փո՛ւշի ըրա՝ լավաշ անինք,
Ախըր մինչը՛վ հիբ բիդի մունք

Դանդին ծերքին ախ-վախ քաշինք՝
Աղէ, արկանք, մանղէ, արկանք
Քըզանում կա էլին հարգանք:

Ըստի հանքանք շատ չընք կենալ,
Շատ չընք մընալ դօնգի, սաման,
Հանքանք մին օր մեզ մըհար էլ
Մին տըղա լիս կըլիսանա:

Աղէ, արկանք, մանղէ, արկանք
Քըզանում կա էլին հարգանք:



ԽԸՆՆՑԷ

Արցախյան ժողովրդական երգ
(Տպագրված է Գուրգեն Գաբրիելյանի «Ղարաբաղի հորովել»
երգարանում, Երևան, 2003 թ.)

Մատաղ ինի ծեզ աքան,
Յէկէք՝ ք յժմագ՝ ըրեցէք՝,
Չաթուն կախ տանք
ուճօրքան,
Կօրծի քըցինք՝ խընեցէն:

Խընէցէ,
Հըրէցէ,
Յըհըր, պարթըքըս տըվէցէ,
Թանավ տօնըս պըհէցէ:

Կարունք ինի, թօռը կա ,
Կօվըս յժնչա՛ ըրածէ,
Կօրծը լիգ՝ը տօ նը կա,
Թացան պիրի չծր հացէն:

Խընէցէ,
Հըրէցէ,
Յըհըր, պարթըքըս տըվէցէ,
Թանավ տօնըս պըհէցէ:

Մեր ապրոստը մին կօվ ա,
Էն էլ յըհէն, կիողացէն,
Ըրտասունքը մին ծօվ ա,
Դէ հունց ապրէ շինացէն:

Խընէցէ,
Հըրէցէ,
Յըհըր, պարթըքըս տըվէցէ,
Թանավ տօնըս պըհէցէ:

«Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խմբի կատարմամբ
Performed by Knar Spiritual and Folk Songs Group



ՄԱՆԱԾ ԹԻԼԸՍ

Գրիգոր Սյունի
Կանանց աշխատանքային երգ

Մանած թիլըս հաստ յըկավ
Վար ու ցանքսըս նըստ յըկավ,
Կարճ ծեռքիս, պերակ մեշկիս
Հինչ գիլիմ ա՛ր, ռաստ յըկավ:
Սըվ քաշերը տօն ընգին,
Լեշ տըսին յըրա պըրծին,
Ախ, յըրա պըրծին, ախ, յըրա
պըրծին:

Բախճան խօտը կօխալ ա,
Ուրաղավ հարօղ չըկա,
Էս հինչ գիլիմ յերգի՛ր ա,
Մըգետե մըտածօղ չըկա:

Բանդըս, բանաս շէն պահիմ,
Չօր տափէն կըրակ անիմ,
Ախ, կըրակ անիմ,
Ախ, կըրակ անիմ:

Քօխան՝ յըզնը, բա գը՛ եծը,
Խարջին պարթըն տըղ տարին,
Տօնը պըրիշակ, տար չըկա,
Անդար խօխա, հան չըկա,
Յըզնը, կիթան, վար չըկա
Տերտակ փօրէն ճար չըկա,
Ախ, վախ, ճար չըկա,
Ախ, վախ, ճար չըկա:



Ա ՔԻՇ, Ա ՔԻՇ

Արցախյան ժողովրդական երգ
(Օրոր)

Ա ՔԻՇ, ա ՔԻՇ, կըտըրվէ՞ք,
Թո՛ղէք ապան քօն ինի,
Յը՛ կէք՝ լմյ, լմյ, լմյ կանչէնք,
Ապան պատահ քօն ինի:


Լմյ, լմյ, անպա ջան,
Բմյ, բմյ, անպա ջան:

Ա ՔԻՇ, ա ՔԻՇ, կըտըրվէ՞ք,
Թո՛ղէք ապան քօն ինի,
Բնլքնմ հըրսանէք՝ քինի,
Շաբաշ տըվօղ շատ ինի:

Լմյ, լմյ, անպա ջան,
Բմյ, բմյ, անպա ջան:

Ա ՔԻՇ, ա ՔԻՇ, սո՛ւս ըրէք,
Թո՛ղէք ապան քօն ինի,
Յը՛ կէք՝ լմյ, լմյ, լմյ անինք,
Ապան պատահ տըրարվէ:

Լմյ, լմյ, անպա ջան,
Բմյ, բմյ, անպա ջան:



ԱՅՈՒՆ ՕՐՇՆԱՆՔԸ

Արցախյան ժողովրդական երգ

Այան մատաղ ծեր ջանեն,
Ծեր տարեն ա, ծեր տարեն,
Հօր ամ հնավասը այանեն,
Ախեր այան հունց պար կամ:

Չէ, տուք յըկեք, պար յըկեք,
Իմ աշկես լիւս, իմ բալեք,
Այան մատաղ ծեր ջանեն,
Այան թիմնշն կանէ:

Էս հինգ զարմանք յերգիր-վըդ ըս,
Էս հինգ վարքար տօն ու տըդ ըս,
Հունց անինք՝ թա կուճիւր-նըդ ըս,
Կուճիւր տըդլավ ամեն տըդ ըս:

Շատ շէն կենաս, մեր Ղարաբաղ,
Մեր ճիրնքին շօղ ու շափաղ,
Մեր տօն ու տըդ, հօղ ու հօտաղ,
Հինգ վեր օնինք՝ լօխ քէզ մատաղ:





ԴԸՌ ԴՕՓ-ԴՕՓ

Արցախյան ժողովրդական երգ
(Հարսանեկան երգ)

Դըռ դօփ դօփ հըրսանէք՝,
Պապունց տանը կընանէք՝,
Հըվաքվալ ըն, վէր ծափ տան
Ուրանց թափ տան ու պար կ'ան
Սըրտընէրէնը վէր ասին,
Ըստո՛ւր, ընդո՛ւր պըմբասին:

Հարսին ասին քաչալա,
Դերը վզան պաչանլա,
Պէլին պըլ ա, դիլանչի,
Խըչախալերը թալանչի:

Դըռ դօփ դօփ հըրսանէք՝,
Պապունց տանը կընանէք՝,
Հըվաքվալ ըն, վէր ծափ տան
Ուրանց թափ տան ու պար կ'ան
Սըրտընէրէնը վէր ասին,
Ըստո՛ւր, ընդո՛ւր պըմբասին:

Հարսեն հանրը լալեգա,
Մարը ցավ ու ալեգա,
Տանը քոռա, քուրը՝ քառ,
Այ քեզ դավալ ու մակառ:

Դըռ դօփ դօփ հըրսանէք՝,
Պապունց տանը կընանէք՝,
Հըվաքվալ ըն, վէր ծափ տան,
Ուրանց թափ տան ու պար կ'ան
Սըրտընէրէնը վէր ասին,
Ըստո՛ւր, ընդո՛ւր պըմբասին:

Հարսեն լյոզոն կրակա,
Բայց մին հոր տան ճիրանքա,
Ախալերըն էլ խաշփուշ ա
Դե հինչ անինք շատ ուշ ա:
Դըռ դօփ դօփ հըրսանէք՝



ՆԱԽՇՈՒՆ ԲԱԶԻ

Արցախյան ժողովրդական երգ


Ինձ ասում ըն Նախշուն բաջի,
Ղարաբաղա Նախշուն բաջի,
Ինձ ասում ըն Նախշուն բաջի,
Ղարաբաղա Նախշուն բաջի:

Յէս քիւնանցի տավարածի,
Տավարըս կօրավ, յէս մընացի,
Յէս քիւնանցի տավարածի,
Տավարըս կօրավ, յէս մընացի,
Տըռընճ, նճ, նճ, նճ,
Տընգընդ, տընգընդ, տընգընդ, տընգընդ,
Տավարըս կօրավ, յէս մընացի,
Տավարըս կօրավ, յէս մընացի,

Ինձ ասում ըն, յէր կաց, պար յըկ,
Զանիտ մատաղ, յէր կաց, պար յըկ,
Ախըր պար կ'անլը գ' հողում չում,
Գ' հողում չում, գ' հողում չում:

Վընաս չօնէ, կըսըվէրիմ,
Համութ պէն չի, կըսըվէրիմ,
Տըմբըլան թակի, զոտնան փըչի, թանը ածէ,
Յէր ում կենում, պար կ'ամ:

Ախըր պար կ'անլը գ' հողում չում,
Գ' հողում չում, գ' հողում չում:



ՏԱՍՆԸԶՕՐՍ ՅԷՍ ՊԱՐ ԿԸԿՂԱՄ ՏԱՍՆԸԶՕՐՍ

Արցախյան ժողովրդական երգ

Մին, երկուս, իրը՛ք, չօրս,
Յէս պար կըկ'ամ տասնըչօրս:
Իմ հավաս ա տասնըչօրս,
Յէս պար կըկ'ամ տասնըչօրս:

Ուզոնդան գլխո՛ւմ չում,
Շոշանիգին սիրո՛ւմ չում:
Օրիշ հավա գլխո՛ւմ չում,
Նունուփարէն էլ օգ'ում չում:
Իմ հավաս ա տասնըչօրս,
Յէս պար կըկ'ամ տասնըչօրս:

Ղարաբաղա այան ըմ,
Մեր սըրէրէն ջէյրան նըմ:
Թունէրիս մինուճարըն ըմ,
Մեր սըրէրէն ջէյրան նըմ:

Տըղէրք ջան, մին կ'աք տըսնանք՝
Էն հուվ ա՛ կ'ամ կըլծիք պէց:
- Ա՛ դա, մին տըս՝ էն Շոշանիգին թօռնըն ա՛...
- Գլխո՛ւմ չում:
- Ա՛ դա, բնա՛ւն Վարթանուշին թօռնըն ա՛:
- Ճընանչո՛ւմ չում, ա՛յա:

- Ը... հա՛... տու մէլ ասէլ,
Մեր Սաթօյէն ըխճըկթօռնէն
Նրա դայուն լալէգ՝ տըղէն
Հըրըվանէն քըռըկընգանը
Նրա քըվօրը տանք'օր տըղէն
Լալէգ՝ տըղէն թօռնըն ա:

Մին, երկուս, իրը՛ք, չօրս,
Յէս պար կըկ'ամ տասնըչօրս:
Իմ հավաս ա տասնըչօրս,
Յէս պար կըկ'ամ տասնըչօրս:



ՃՕԽՏ ԾԱՂԿԷՆ ԿԷՆԱՅԸ

Խոսք՝ Ալեքսանդր Մանասյանի
Երաժշտ.՝ Արտեմ Խաչատուրի
(Հարսանեկան երգ)

Ժողովուրդ ջան, շէն կենաք,
Վարքար կենաք, պէնդ կենաք,
Յը՛ կէք՝ մեր էս առաջին,
Կենացը տանք ճօխտ ծաղկէն:

Պարի ասթըխէն թող ինի,
Պարի սըհաթէն ինի,
Ուրանց փըռնած էս կօրծը,
Ըստուծու քը՛փավ ինի:

Ըսօր սիրուն ծաղկալ ըն,
Էքյոց պէրքավ ծընդրանան,
Հանցու Արցախ յերգիորը
Ուրանց անավ զօրանա:


Հանցու ապուն տան հիւրթան,
Ծօխը ասթխեր պիցրանա,

Հանցու օխտը տըղօցավ,
Օխտը սերուն հըրթնօցավ:

Պարի ասթըխէն թող ինի,
Պարի սըհաթէն ինի,
Ուրանց փըռնած էս կօրծը,
Ըստուծու քը՛փավ ինի:

Սեղան նըստին յը՛ր կենան,
Վարքար կենան, շէն կենան:
Մեր ճօխտ ծաղկէն կենացը
Թող մին պէրցու ծերանան:

Հանցու Արցախ յերգիորը
Ուրանց անավ զօրանա:
Հանցու Արցախ յերգիորը
Ուրանց անավ զօրանա:



ՀԷՂԻՆԱ

Խոսք՝ Ալեքսանդր Մանասյանի
Երաժշտ.՝ Արտեմ Խաչատուրի

Էս հինչ օր ամ, հինչ ք'ըսծր ամ, Հեղինա,
Կ'անպիտ յերգի'նք', կ'անպիտ ծօր ամ, Հեղինա,
Հօտադատըդ Սիսեռնը ախպիւր,
Օջը դըբի ծօրնըվեր ամ, Հեղինա, Հեղինա:

Էս հինչ օր ամ, հինչ ք'ըսծր ամ, Հեղինա,
Մընիշակավ հնրփանծ ծօր ամ, Հեղինա,
Հավք ու ծաղեգ՝ մեզ ըն ասում
Խօսքը տալի օրը սօր ամ, Հեղինա, Հեղինա:






ԱՐՑԱԽԻ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐ
WONDERS OF ARTSAKH

Զտեր Աթանաս յիշեսցի՛ք ի
Քրիստոս, թվին Հայոց ՉԼԲ.,
էին Աստուծոյ զարութեամբն
ես՝ տէր Աթանաս, որդի
Հասանա, առաջնորդ սուրբ
ուխտիս, կանգնեցի զսուրբ
նշանս յիշատակ հոգոյ իմոյ:


Արցախի ամենաբարձր
երկվորյակ խաչքարերը
կանգնեցվել էին Դադիվանքի
զանգակատան ներսում 1283 թ.:

Tallest Twin khatchkars in
Artsakh from 1283 were erected
inside the belfry of Dadivank.






Շուշիի Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցի, օծվել է 1888 թ.
Holy All Savior Ghazanchetsots Church of Shoushi, consecrated in 1888



Գանձասար, վանական համալիր՝ կառուցված 1216-1238 թթ. | Վանք գյուղ
Gandzasar monastery built between 1216 and 1238 | Vank village



Ասկերանի ամրոց | Ասկերան, 1751 թ.
Askeran Fortress Mayraberd | 1751



Մենք ենք մեր սարերը | Քանդակագործ Սարգիս Բաղդասարյան, 1967 թ.
We Are Our Mountains | Stepanakert Completed in 1967 by Sarkis Baghdasaryan



Տիգրանակերտի ամրոց | 18-րդ դար
Tigranakert fortress | 18th century



Սուրբ Հովհաննես Կարապետ եկեղեցի | Մարտակերտ, 1883 թ.
St. Hovhannes Karapet Church | Martakert, 1883



Վանքասարի եկեղեցի | 7-րդ դար
Vankasar Church | 7th century



Ամարաս վանք | 4-րդ դար
Amaras Monastery | 4th century



Դադիվանք | 9-13-րդ դդ.
Dadivank | 9th–13th centuries



Կատարո վանք | 4-րդ դար, 17-րդ դար
Katarovank Monastery | 4th century, 17th century




Ծիծեռնավանք | Քաշաթաղ, 5-րդ դար
Tzizernavank Monastery | Kashatagh, 5th century



Խաթրավանք | Վաղուհաս, 1182 թ.
Khatravank Monastery | Vaghuhas, 1182



Մոխրենեսի «Օխտը դռնի» վանք | 5-7-րդ դդ.
Mokhrenis, church known as Okhte Drni the seven gates | 5-7th centuries



Գտչավանք | 1241-1246 թթ.
Gtichavank Monastery | 1241-1246



Հունոտի կիրճ, բնական արգելոց, Շուշի
Hunot Canyon is a natural reserve, Shoushi

Տնջրի, 2041 տարեկան հսկա չինարի ծառ,
Մարտունի, Սխտորաշեն գյուղ

2041-year-old giant Oriental Tnjri Plane tree,
Skhtorashen village in the Martuni Region



Շուշի
Shoushi




Շուշի, Shoushi



Գտչավանք 1241-1246
Gtichavank 1241-1246

Արցախը կանչում է

1. **ՁԻԳ ՏՈՒ, ՔԱՇԻ** (Վարանդայի հորովել)
Գրառումը՝ Կոմիտասի
2. **ՀՈՒ ԱՐԱ, ԳՈՄԵՇ ԶԱՆ** (Ղազախի կալի-սայլի երգ)
Գրառումը՝ Կոմիտասի
3. **ԻՐԻՔՆՅԱԿ ՏՅՈՒՍ Ա ԵԿԱԼ**
(Գ.Գաբրիելյանի երգածից ձայնագրել և վերծանել է
Արթուր Շահնազարյանը)
4. **ԱՂԷ ԱՐԿԱՆՔ** (ԱՂԷ ԱՐԳԱՆՔ, ՄԱՂԷ ԱՐԳԱՆՔ)
«Գանձասար» համույթի կատարումից
Գեղ. ղեկ.՝ Թ. Պողոսյան, մշակումը՝ Ա. Խաչատուրի
5. **ԽԸՆԷՑԷ, ՀԸՐԷՑԷ** (Խնոցու երգ)
Մշակումը՝ Ա. Խաչատուրի
«Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խմբի ձայնակցությամբ
6. **ՄԱՆԱԾ ԹԻԼԸՍ** (Գեղջկուհու գանգատը)
Գրառումը՝ Գր. Սյունու, մշակումը՝ Ա. Խաչատուրի
7. **ՍՔԻՇ, ՍՔԻՇ** (Արցախյան ժողովրդական օրոր)
Գրառումը՝ Ռ. Աթայանի, վերծանումը՝ Մ. Տիգրանյանի, մշակումը՝
Ա. Խաչատուրի

- 
8. **ԱՅՈՒՆ ՕՐՆԱՆՔԸ** (ԱՅԱՅԻ ՕՐՆԱՆՔԸ)
(Արցախի ժողովրդական հարսանեկան երգ՝ մաղթանք)
Մշակումը՝ Ա. Խաչատուրի
 9. **ԴԸՌ ԴՕՓ-ԴՕՓ** (Արցախյան ժողովրդական հարսանեկան կատակերգ) Մշակումը՝ Ա. Խաչատուրի
 10. **ՆԱԽՇՈՒՆ ԲԱԶԻ** (Արցախյան ժողովրդական պարերգ)
Մշակումը՝ Ա. Խաչատուրի
 11. **ՏԱՄՆԸՉՕՐՍ** (Արցախյան ժողովրդական պարերգ)
Մշակումը՝ Ա. Խաչատուրի
 12. **ՃՕԽՏ ԾԱՂԿԷՆ ԿԷՆԱՅԸ** (Հարսանեկան երգ)
Խոսք՝ Ա. Մանասյանի, երաժշտ.՝ Ա. Խաչատուրի
 13. **ՀԷՂԻՆԱ** (Քնարական)
Խոսք՝ Ա. Մանասյանի, երաժշտ.՝ Ա. Խաչատուրի

Artsakh Beckons

1. **DZIG TU, KASHI** (horovel from Varanda)
Recorded by Komitas
2. **HOL ARA, GOMESH JAN** (barn- cart song from Kazakh)
Recorded by Komitas
3. **IRIKNYAKY TYUS A YEKAL**
(Artur Shahnazaryan recorded and decoded it from the singing by G. Gabrielyan)
4. **AGHE ARKANK**
From the performance of the Gandzasar Ensemble
Artistic Director: T. Poghosyan, arranged by A. Khachatur
5. **KH'NETSE, H'RETSE** (Churn song)
Arranged by A. Khachatur
Accompanied by the Knar Spiritual and Folk Songs Group
6. **MANATS TEEL'S** (The complaint of the peasant woman)
Recorded by Gr. Syuny, arranged by A. Khachatur
7. **A'KISH, A'KISH** (Artsakh folk song)
(It is being performed for the first time; it is unpublished)
Recorded by R. Atayan, deciphered by M. Tigranyan, arranged by A. Khachatur

8. AYA'S BLESSING

(A folk wedding song of Artsakh: wish)

Arranged by A. Khachatur

9. D'R DOP -DOP (Artsakh folk wedding joke song)

Arranged by A. Khachatur

10. NAKHSHUN BAJI (Artsakh folk dance song)

Arranged by A. Khachatur

11. TASN'CHORS (Artsakh folk dance song)

Arranged by A. Khachatur

12. JHOKHT TSAHKEN KENATSY (Toast to Newlyweds) (Wedding song)

Lyrics by A. Manasyan, Music by A. Khachatur

13. HEGHINA (Lyrical)

Lyrics by A. Manasyan, Music by A. Khachatur

Արցախը կանչում է **Artsakh Beckons**

Երգերի մշակումը՝ **Արտեմ Խաչատուրի**
Songs arranged by **Artem Khachatur**

Ձայնագրությունը՝ **Դանիել Այրիյանի**
Recording by **Daniel Ayriyan**

Լուսանկարները՝ **Հրայր Բազե Խաչերեանի** և **Վլադիմիր Գևորգյանի**
Photos by **Hrair Hawk Khatcherian** and **Vladimir Gevorgyan**

Հանդաբերդի խաչքարի լուսանկարը՝ **Հրայր Բազե Խաչերեանի**
Handaberd Khachkar Photo by **Hrair Hawk Khatcherian**

Նկարները՝ **Սամվել Թավադյանի**
Paintings by **Samvel Tavadyan**

Գրաֆիկ դիզայներ՝ **Վարանդ Զանդիլյան**
Graphic Designer: **Varant Kandilian**

Թարգմանիչ և սրբագրիչ՝ **Մարինե Հարությունյան**
Translation and proofreading: **Marine Harutyunyan**

Գործադիր պրոդյուսեր՝ **Նարեկ Յարութինեան**
Executive Producer: **Nareg Hartounian**



Հատուկ շնորհակալություն Հայաստանի
ճարտարապետների միությանը, Դանիել Այրիյանին,
Արտեմ Խաչատուրին և Հրայր Բազե Խաչերեանին:

**Special thanks to Chamber of Architects of Armenia, Daniel
Ayriyan, Artem Khachatur and Hrair Hawk Khatcherian.**

© © «Նարեկացի» արվեստի միություն, 2024

© © Naregatsi Art Institute, 2024

ISBN 978-9939-9351-0-2





Ստեփանակերտ, Stepanakert





«Արամ Մանուկեան» ամառային ճամբար՝ կազմակերպված Շամլեան ընտանիքի կողմից
Aram Manoogian Summer Camp organized by the Chamlian family



Սկանավորեք QR կոդը՝ երգերը լսելու համար
Scan the QR code to listen to the songs



ՆԱՐԵԿԱՅԻ ԱՐԿԵՍԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
NAREGATSI ART INSTITUTE